ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

24 հոկտեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

146
(2996)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ԻՆՉ ՆԱՄԱԿ Է ՍՏԱՑԵԼ ՊԱՅԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՔ. ՎԱՐՈՒՅԹԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ԱԺ նախկին պատգամավոր, այժմ Ռուսաստանում Հայաստանի դեսպան Գուրգեն Արսենյանի գրասենյակի դիմաց տեղադրված պայթուցիկի գործով, բնականաբար, հարցաքննվել է նաեւ ինքը՝ Արսենյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ է հայտնվել Արսենյանի տված ցուցմունքը եւս, որտեղ նա քննիչին ասել է՝ «Այդ ժամանակ էլ տագնապ զգացի՝ հասկանալով, թե ինչ կարող էր լինել, եթե դա պայթեր»:

Դեռեւս փետրվարի 20-ին ՔՊ գրասենյակի, ինչպես նաեւ ՔՊ պատգամավորներ Գուրգեն Արսենյանին եւ Գագիկ Մելքոնյանին պատկանող տարածքներում ռումբ տեղադրելու գործով քրեական վարույթ կա նախաձեռնված, ու գործը դատարանում է :

ՀՀ քննչական կոմիտեն պարզել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներին, նրանց աջակիցներին ահաբեկելու համար 2024 թվականի փետրվարի 20-ին քաղաքացին գնացել է Երեւան քաղաքի Գյուլբենկյան 33 հասցեում գտնվող «Միավորված աշխատանքային կուսակցության» գրասենյակի մոտ եւ ժամը 03:50-ին գրասենյակից 9 մետր հեռավորության վրա գտնվող մայթեզրի ծառի տակ տեղադրել է նախապես պատրաստված, որպես պայթեցման միջոց շուրջ 1 կիլոգրամ տրոտիլ եւ պենտալիտ, ավերածություններ գործելու, մարդկանց կյանքից զրկելու, շրջակա շինություններն ամբողջությամբ ավերելու համար պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը:

Նույն ժամանակահատվածում պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը տեղադրել են Գյուլբենկյան 30/3 հասցեում գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տարածքային գրասենյակի մուտքի մոտ՝ այդ կերպ առաջացնելով պայթյունի եւ հրկիզման իրական սպառնալիք. սակայն Վ.Հ.-ի կողմից տեղադրված պայթեցման սարքերը չեն պայթել՝ ինքնաշեն պայթեցման սարքերի գործարկման մեխանիզմի՝ հաշվարկված եղանակով չգործելու պատճառով:

Նկատենք, որ ՔՊ գրասենյակի եւ «Միավորված աշխատանքային կուսակցության» հիմնադիր ղեկավար Գուրգեն Արսենյանի գրասենյակի մոտ պայթուցիկ տեղադրելու գործով կալանավորվածները չեն ընդունում առաջադրված մեղադրանքը:

Ստորեւ՝ Գուրգեն Արսենյանի ցուցմունքը.

«Որքանով հիշում եմ՝ 2020 թվականի փետրվարի 20-ին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի միջոցով ստացել եմ հաղորդագրություն ինչ-որ «ֆեյք» էջից, որում, մասնավորապես, ասվում էր. «Հը՞ն, ո՞նց էր, պայթյունը դուրդ եկա՞վ.....»: Ես ուշադրություն չեմ դարձրել այդ հաղորդագրությանը եւ արգելափակել եմ այդ էջը, դրանից հետո՝ փետրվարի 22-ի երեկոյան, գնացել եմ Գյուլբենկյան 33 հասցեի գրասենյակային տարածք եւ այնտեղ տեսել եմ պայթուցիչի գլանակներ, մանեկներ, էլեկտրոնային ժամացույցի մեխանիզմ: Հարցրել եմ, թե դա ինչ է, գրասենյակի աշխատակից Սերգեյ Կարապետյանը ասել է, որ այն երկու օր առաջ է գտել գրասենյակի դիմացի ծառի տակից, բերել է գրասենյակ ու սկսել է քանդել: Այդ ժամանակ ես հասկացա, որ դա պայթուցիկ սարք է, ու անմիջապես զանգեցի, հրահանգեցի, որ այդ մասին հայտնեն իրավապահներին:

***Ցուցմունքն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում:***

Հոկտեմբերի 21-ին նշվեց ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 20-ամյակը՝ կազմակերպելով «Օմբուդսմանական/ Մարդու իրավունքների ազգային հաստատությունները ճգնաժամային իրավիճակներում. Ճկունություն եւ մարտահրավերներ» խորագրով երկօրյա, բարձր մակարդակի միջազգային համաժողովը: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ ՄԻ պաշտպան Անահիտ Մանասյանը, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, պետական այլ այրեր, մի շարք դեսպաններ ու այլ անձինք: Հետաքրքիրն այն է, որ միջոցառմանը ներկա չեն գտնվել նախկին պաշտպաններ Կարեն Անդրեասյանը, Արման Թաթոյանը եւ առաջին ՄԻՊ Լարիսա Ալավերդյանը: Ավելի վաղ անդրադարձել էինք այս թեմային, եւ պարզվել էր, որ Լարիսա Ալավերդյանին եւ Արման Թաթոյանին հրավեր չի եղել, սակայն առաջիկայում Պաշտպանի հաստատության 20-ամյակին նվիրված այլ միջոցառումներ են լինելու, այդ թվում՝ նախատեսված ինչպես ներկայիս աշխատակազմի, այնպես էլ նախկին աշխատակիցների եւ տարբեր ժամանակահատվածների Պաշտպանների համար: Իսկ ինչու ներկա չէր Կարեն Անդրեասյանը, ով նույնպես եղել է օմբուդսմեն եւ այժմ ԲԴԽ նախագահ է: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ՀՀ ՄԻՊ խորհրդական Արթուր Ասլանյանի հետ՝ պարզելու՝ արդյոք միջոցառմանը հրավիրված եղել է Կարեն Անդրեասյանը, թե ոչ: Ի պատասխան՝ Արթուր Ասլանյանն ասաց. «Մենք բոլոր պետական պաշտոնյաներին հրավեր ուղարկել ենք, իսկ թե ինչու չի եկել, բարձրագույն դատական խորհրդից ճշտեք, չենք կարող ասել: Մյուս միջոցառմանը դեռ հրավիրվածներ չկան, այսինքն՝ դեռ չենք ուղարկել հրավերներ: Միջոցառումները մշակման փուլում են»:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից պարզեց, որ «ԷԿԼ ՕՖ ՈՒՎԿ», «ՍԵՖ Ինթերնեյշնլ ՈՒՎԿ», «Արեգակ ՈՒՎԿ» կազմակերպությունները դատարանների միջոցով փորձում են արդարադատություն «ստանալ» Արփի Դավոյանի քրոջ՝ Լուսինեի նկատմամբ, քանի որ նա չի վճարում իր պարտքերը: Վճիռների պատկերն այսպիսին է. «ԷԿԼՕՖ ՈՒՎԿ» 2 բռնագանձման վճիռ՝ 1 միլիոն 366 հազար դրամ եւ 601 հազար դրամ: «Սեֆ ինթերնեյշնլ ՈՒՎԿ»՝ 3 հազար 814 դոլար: «Արեգակ ՈՒՎԿ»՝ 194 հազար դրամ: Բայց քանի որ կա հեղափոխությունից հետո ձեւավորված «բարի ավանդույթը»՝ ՔՊ-ականների պարտքերը «ջրելը» եւ հայցերը «կարճելը», Լուսինե Դավոյանը եւս անհոգ պաշտոնավարում է Ստեփանավանի քաղաքապետարանում: «Թո՛ղ պարտատերերը մտածեն...», ինչպես հայտնի հումորապատումի մեջ է: Փաստորեն հեղափոխականները, դիցուք՝ արդարադատության նախարարի «քննությունից կտրված» Արփի Դավոյանը, ընտանիքի անդամների հետ պարտքեր է կուտակել, չի վճարել, ստիպված պարտքատեր բանկերն ու վարկային կազմակերպությունները դատարան են դիմել:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը շուրջ մեկ ամիս է չի կարողանում արդարադատության նոր նախարար ընտրել: Գրիգոր Մինասյանի հրաժարականից հետո ՔՊ կուսակցությունը երկու անգամ վարչության նիստ է արել, տարբեր թեկնածուների քննարկել, բայց Նիկոլ Փաշինյանը բոլորին «մերժել ու տուն է ճանապարհել»: Նա Գրիգոր Մինասյանին արժանի փոխարինող է փնտրում, որը չկա ՔՊ կազմում: Վարչության՝ երեքշաբթի օրը կայացած նիստի ժամանակ, արդարադատության նախարարի 4 թեկնածուները ծավալուն ելույթներով են հանդես եկել: Վարչապետի խոսնակ Նազելի Բաղդասարյանը եւ Երեւանի փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը ելույթներից հետո ինքնաբացարկ են հայտնել, արդյունքում՝ վարչության նիստում քննարկումներն ընթացել են ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանի եւ փաստաբան Ալեքսանդր Սիրունյանի թեկնածությունների շուրջ, ով եւս ՔՊ կուսակցության անդամ է: ՔՊ վարչության անդամներից միայն 3-ն է քվեարկել Արմեն Խաչատրյանի թեկնածության օգտին, իսկ Ալեքսանդր Սիրունյանն առհասարակ քվե չի ստացել: Հետաքրքիր է՝ այդ դեպքում ինչու են նրան առաջարկել որպես թեկնածու ներկայանալ: Այսպիսով, ինչպես նախորդ նիստին վարչությունը Արփի Դավոյանին մերժեց, հիմա էլ Արմեն Խաչատրյանին է մերժել: Նշենք, որ նախարարի հիմնական թեկնածուները՝ ՔՊ-ական պատգամավորներ Արփի Դավոյանը եւ Արմեն Խաչատրյանը, երկուսն էլ Գրիգոր Մինասյանի պաշտոնանկության իրական հեղինակ Անդրանիկ Քոչարյանի թեկնածուներն են եղել, նրանց լոբբինգով կուսակցությունում հենց Քոչարյանն է զբաղվել, սակայն երկուսին էլ Նիկոլ Փաշինյանը մերժել է:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

ԶՐՈՒՅՑ

# ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՆԱԽԱՐԱՐ ԸՆՏՐԵԼ

**«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը շուրջ մեկ ամիս է՝ չի կարողանում արդարադատության նոր նախարար ընտրել:**

Գրիգոր Մինասյանի հրաժարականից հետո ՔՊ կուսակցությունը երկու անգամ վարչության նիստ է արել, տարբեր թեկնածուներ քննարկել, բայց Նիկոլ Փաշինյանը բոլորին մերժել է:

«Ժողովուրդ» օրաթերթը թեմայի առնչությամբ զրուցել է քաղտեխնոլոգ Արմեն Բադալյանի հետ:

**-Արդեն տեւական ժամանակ է՝ մոտ մեկ ամիս, ինչ իշխանությունները չեն կարողանում իրենց շարքերից նախարար ընտրել արդարադատության նախարարի թափուր պաշտոնի համար: Արդեն երկրորդ անգամ է, որ առաջադրված թեկնածուները մերժվել են: Չնայած նրան, որ իրենք վստահեցնում են, թե կադրերի կարիք չունեն եւ կադրերի սով չկա, բայց տեսնում ենք հետեւյալ պատկերը, որ չեն կարողանում նախարար ընտրել: Տեսնում ենք, որ իրականում այլ իրավիճակ է: Ո՞րն է պատճառը:**

-Կադրերի սովը: Այն կա արդարադատության համակարգում, եւ այլ հասարակ բոլոր ոլորտներում՝ կլինի էկոնոմիկայի, առողջապահության նախարարության, թե այլ: Արդարադատության նախարարությունը այս պարագայում կարիք ունի այնպիսի որակյալ իրավաբանի, որը կհասկանա, թե բարեփոխումների ինչպիսի բովանդակություն պիտի մշակի: Այսինքն՝ երկրի դատահիրավական համակարգի բարեփոխման ուղղությունը պիտի որոշի այդ անձնավորությունը: Դրա համար անձը պիտի լինի պրոֆեսիոնալ իրավաբան, այլ երկրների փորձը ուսումնասիրած լինի: Առաջադրված թեկնածուներից եւ ոչ մեկը չեն համապատասխանում այդ պաշտոնին:

**-Պարոն Բադալյան, սակայն առաջին դեպքը չէ սա, չէ՞, որ պաշտոնին չհամապատասխանող անձին նշանակում են միայն այն բանի համար, որ կուսակցության անդամ է:**

-Այո՛, կան նման դեպքեր: Խնդիրը միայն դա չէ, երկրորդ պատճառն այն է, որ այս կամ այն թեկնածուն հստակ որեւէ խմբավորման թեկնածու է կուսակցության ներսում: Ժամանակին, հիշո՞ւմ եք՝ վարչապետն ինչ էր ասում՝ «կուսակցության թեւերը կկտրեմ», այս կանեմ, այն կանեմ՝ առանց հասկանալու, որ կուսակցության մեջ թեւերի առաջացումն օբյեկտիվ երեւույթ է, քանի որ իր խմբակցության մեջ կան տարբեր շահեր հետապնդող խմբեր, եւ շատ դեպքերում բախումներ կան: Հիմա առաջադրված թեկնածուները տարբեր խմբերի շահեր են ներկայացնում, դրա համար էլ Նիկոլ Փաշինյանը չի ցանկանում, որ նրանց ընտրվեն:

**-Ինչ խմբերի մասին է խոսքը:**

-Յուրաքանչյուրը մեկ խմբի շահեր է սպասարկում:

**-Ասում են, որ Արմեն Խաչատրյանի թեկնածությունը հովանավորում է Անդրանիկ Քոչարյանը:**

-Դուք Ձեր հարցին պատասխանեցիք: Եթե մի խմբավորման թեկնածուին ընտրվելու հնարավորություն եք տալիս, ապա այդ խմբավորմանը այլ գործողությունների գնալու հնարավորություն էլ է տրվում: Դա կարող է նախադեպ լինել:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԸՆԹԱՑԻԿ

## ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ 3 ՔՎԵ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԻՐՈՒՆՅԱՆ՝ 0

Ինչպես արդեն նշել ենք՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն արդեն շուրջ մեկ ամիս է՝ չի կարողանում արդարադատության նոր նախարար ընտրել: ՔՊ Վարչությունն արդեն երկրորդ նիստն է հրավիրում, որպեսզի նոր նախարար ընտրի, սակայն ապարդյուն:

«Ժողովուրդ» օրաթերթն արդեն հայտնել է, որ ՔՊ-ն վարչության նիստ է արել, քննարկել արդարադատության նոր նախարարի հարցը, սակայն վարչությունը հերթական անգամ բոլոր թեկնածուներին մերժել է:

«Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ վարչության օրերս կայացած նիստից:

Այսպիսով՝ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ արդարադատության նախարարի 4 թեկնածուները նախ ելույթներով են հանդես եկել:

Վարչապետի խոսնակ Նազելի Բաղդասարյանը եւ Երեւանի փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը ելույթներից հետո ինքնաբացարկ են հայտնել, արդյունքում՝ վարչության նիստում քննարկումներն ընթացել են ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանի եւ փաստաբան Ալեքսանդր Սիրունյանի թեկնածությունների շուրջ, ով եւս ՔՊ կուսակցության անդամ է:

ՔՊ վարչության անդամներից միայն 3-ն են քվեարկել Արմեն Խաչատրյանի թեկնածության օգտին, իսկ Ալեքսանդր Սիրունյանն առհասարակ քվե չի ստացել:

Ինչպես արդեն «Ժողովուրդ» օրաթերթը հայտել է, Արմեն Խաչատրյանի լոբբինգով զբաղվել է ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը, որը փորձում է իրավապահ եւ ուժային կառույցներում կարեւոր պաշտոններին իր մարդկանց կարգել:

Նախորդ նիստին ՔՊ վարչությունը կրկին մերժել էր Անդրանիկ Քոչարյանի թեկնածու Արփի Դավոյանին:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Նիկոլ Փաշինյանն այս անգամ էլ չի քվեարկել, պասիվ կեցվածք է ունեցել, միայն նիստն է վարել, բայց դիրքորոշում թեկնածուների վերաբերյալ չի արտահայտել:

Փաստ է մեկ բան՝ թեկնածուներից եւ ոչ մեկը Փաշինյանի սրտով չէ, վերջինս իր թիմակիցներին հստակ ասել է, որ գոհ էր նախկին նախարար Գրիգոր Մինասյանի աշխատանքից, ում դեմ ՔՊ-ական պատգամավորները ստորագրահավաք էին նախաձեռնել, եւ ՔՊ-ականներից պահանջել է թե՝ ինչպես պարտադրեցիք նրան հրաժարական տալ՝ հիմա էլ համապատասխան թեկնածու գտեք:

*Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## ԸՆԴՈՒՆՎԵՑ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՕՐԻՆԱԳԻԾԸ

Հայաստանի ազգային ժողովը վավերացրել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահմանի սահմանազատման հարցով հանձնաժողովների գործունեության կանոնակարգը:

«Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգը վավերացնելու մասին նախագիծն ընդունվեց ԱԺ-ի հոկտեմբերի 23-ի նիստում՝ ստանալով 67 կողմ ձայն:

Նախագծին քվեարկությամբ կողմ էր քվեարկել 65 պատգամավոր, բացակա եւս 2 պատգամավոր թողել էին իրենց կողմ քվեարկությունը:

Ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները չեն մասնակցել ո՛չ քննարկմանը, ո՛չ քվեարկությանը:

## ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ՀԱՅ ԿԻՆ Է ՄԱՀԱՑԵԼ

Ադրբեջանի առողջապահության նախարարությունը հաղորդել է, որ հոկտեմբերի 20-ին իր տանը մահացել է Ադրբեջանի կողմից օկուպացված Ստեփանակերտի բնակչուհի, ազգությամբ հայ, 1954 թվականին ծնված Վերա Աղասյանը:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից տեղեկացնում են, որ այսօր՝ առավոտյան՝ 09:30-ին, ՀՑԹԻ-ում մեկնարկելու է միջազգային գիտաժողով՝ «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը. տասնամյակների անավարտ պայքարի հիշողութային, քաղաքական եւ աշխարհաքաղաքական ուղենիշները» թեմայով:

Գիտաժողովին մասնակցելու է շուրջ երեսուն գիտնական՝ Հայաստանից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Բելգիայից, Գերմանիայից, Լեհաստանից, Լիբանանից, Բրազիլիայից, Արգենտինայից, Նոր Զելանդիայից, Հնդկաստանից, Ավստրալիայից, Իռլանդիայից, Ֆինլանդիայից եւ Իսպանիայից:

## ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՀԱՆՋԸ

Եվրախորհրդարանում կայացել է քննարկում՝ «Ադրբեջանում քաղաքական իրավիճակը եւ մարդու իրավունքների խնդիրները» թեմայով: Հինգշաբթի կկայանա բանաձեւի քվեարկությունը:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերով եվրահանձնաժողովի փոխնախագահ Նիկոլաս Շմիտը նշել է, որ Ադրբեջանում օրեցօր վտանգվում են մարդու իրավունքները, եւ ավելի է ճնշվում ազատ խոսքը: Միաժամանակ, նա նշել է, որ Երեւանը եւ Բաքուն այսօր առավել քան երբեւէ մոտ են խաղաղության հաստատմանը, եւ Եվրամիությունն ամբողջովին աջակցում է երկու երկրի միջեւ ընթացող խաղաղության գործընթացին:

Ֆրանսիացի պատգամավոր Քսավիե Բելամին դատապարտել է Ադրբեջանի հարձակումը ԼՂ եւ Հայաստանի դեմ, հայտարարել է, որ Իլհամ Ալիեւը փորձում է միջամտել Եվրամիության, Ֆրանսիայի ներքին գործերին, ապակայունացնել իրավիճակը Նոր Կալեդոնիայում: Նա առաջարկել է անհապաղ պատժամիջոցներ սահմանել Ադրբեջանի նախագահի եւ պաշտոնյաների հանդեպ:

Մեկ այլ ֆրանսիացի պատգամավորի՝ Ժորդան Բարդելայի խոսքով՝ Եվրամիությունը, Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի աջակցությամբ, գազ է գնում Ադրբեջանից:

Նատալի Լուազոն ԼՂ դեմ հարձակումն անվանել է էթնիկ զտում եւ կոչ արել բոյկոտել Բաքվում կայանալիք ԿՈՊ-29 համաժողովը:

Պատգամավորները պնդել են, որպեսզի ԵՄ-ն Ադրբեջանից պահանջի հարգել մարդու իրավունքները, պահպանել հայկական մշակութային ժառանգությունը եւ ապահովել ԼՂ-ից բռնի տեղահանված հայերի իրավունքները: Նրանք նաեւ տեղեկացրել են, որ հինգշաբթի քվեարկության դրվելիք բանաձեւում ամբողջությամբ սատարում են ԵՄ հետ Հայաստանի մերձեցման նախաձեռնությանը եւ դատապարտում Իլհամ Ալիեւի քաղաքականությունը տարածաշրջանում:

## ԲԼԻՆՔԵՆԸ ԱՅՑԵԼԵԼ Է ԻՍՐԱՅԵԼ

ԱՄՆ պետքարտուղարը ժամանել է Իսրայել: Նա արդեն հանդիպել է վարչապետ Բենիամին Նեթանյահուի հետ: Դա Էնթոնի Բլինքենի 11-րդ այցն է Իսրայել 2023 թվականի հոկտեմբերի 7-ին ՀԱՄԱՍ խմբավորման հարձակումից հետո: Նախատեսված են նաեւ Բլինքենի հանդիպումները հրեական պետության նախագահ Իցհակ Հերցոգի, պաշտպանության նախարար Յոավ Գալանտի եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Reuters-ը գրում է, որ սա ԱՄՆ-ի առաջին նշանակալի փորձն է՝ հրադադարի հասնելու Մերձավոր Արեւելքում Իսրայելի կողմից ՀԱՄԱՍ-ի առաջնորդին սպանելուց հետո:

Նշվում է նաեւ, որ այդ հանդիպումը վերջին դիվանագիտական փորձն է ԱՄՆ նախագահի ընտրությունից առաջ, որը կարող է փոխել երկրի արտաքին քաղաքականությունը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ BRICS–Ի ԾՐԶԱՆԱԿՈՒՄ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը 14 երկկողմ հանդիպում կանցկացնի BRICS-ի գագաթնաժողովի շրջանակներում:

Չինաստանի նախագահ Սի Ցզինպինի հետ հանդիպումից հետո Պուտինը կհանդիպի Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթթահ ալ-Սիսիի, Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի, Հարավաֆրիկյան Հանրապետության նախագահ Սիրիլ Ռամաֆոսայի եւ BRICS-ի Նոր զարգացման բանկի նախագահ Դիլմա Ռուսեֆի հետ: Ըստ առավել վաղ հայտարարությունների՝ Կազանում կգտնվեն նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդներ Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիեւը:

Չորեքշաբթի նա կհանդիպի Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանի, Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի եւ Եթովպիայի վարչապետ Աբիյ Ահմեդի հետ, հինգշաբթի՝ Պաղեստինի նախագահ Մահմուդ Աբասի, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի, Լաոսի նախագահ Թհոնգլուն Սիսուլիտի, Մավրիտանիայի նախագահ Մուհամեդ Ուլդ Ալ-Շեյխ ալ-Ղազուանի, Բոլիվիայի նախագահ Լուիս Արսեի, Վիետնամի վարչապետ Ֆամ Մին Չինի հետ:

Այս օրերին չեն բացառվում նաեւ այլ շփումներ, այդ թվում՝ Սերբիայի ղեկավար Միլորադ Դոդիկի հետ:

BRICS-ի միջոցառումներին կմասնակցեն 36 պետության ներկայացուցիչ:

## ՊԱՅՔԱՐ՝ ԻՍՐԱՅԵԼԻ ԴԵՄ

Մերձավոր Արեւելքում Իսրայելի ագրեսիայի դադարեցումը հնարավոր է միջազգային հանրության համատեղ ջանքերով: Այս մասին Իտալիայի վարչապետ Ջորջիա Մելոնիի հետ հեռախոսազրույցում հայտարարել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը:

«Միջազգային հանրությունը միասին պետք է գործի Իսրայելի ագրեսիան դադարեցնելու համար»,- ասել է Թուրքիայի ղեկավարի գրասենյակը: Էրդողանը նաեւ ասել է, որ Իսրայելի հարձակումները պաղեստինյան տարածքների, այդ թվում՝ Գազայի, ինչպես նաեւ Լիբանանի եւ ՄԱԿ-ի առաքելությունների վրա անընդունելի են:

ՆԱՄԱԿ

# ԻՆՉ Է ԳՐԵԼ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱՅԴԵՆԸ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

**ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը նամակ է հղել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Նամակում, մասնավորապես, ասված է.**



«Հարգելի՛ պարոն վարչապետ,

Ուրախ եմ տեսնել, որ Ձեր երկիրը եւ Ադրբեջանը կայուն առաջընթաց են գրանցել խաղաղության համաձայնագիրը վերջնական տեսքի բերելու ուղղությամբ, որը կկարգավորի ձեր երկու երկրների միջեւ հարաբերությունները:

Ես ուզում եմ Ձեզ վստահեցնել, որ Միացյալ Նահանգները պատրաստ է աջակցել կայուն եւ արժանապատիվ խաղաղության համաձայնագրին, որը վերջնականապես վերջ կդնի դարավոր հակամարտությանը: Խաղաղության համաձայնագիրը, որը երաշխավորում է Հայաստանի միասնությունը, ինքնիշխանությունը եւ տարածքային ամբողջականությունը, ապահովություն եւ կայունություն կապահովի ոչ միայն հայ ժողովրդի համար, այն կվերափոխի ողջ Հարավային Կովկասի տարածաշրջանը:

Ինչպես գիտեք՝ խաղաղության համաձայնագրի մնացած հոդվածների վերջնականացումը կպահանջի համառություն, հնարամտություն եւ փոխզիջում: Բայց հայրենասիրությունը քաղաքականությունից վեր դասելով՝ Դուք խիզախորեն եւ հետեւողականորեն ընտրել եք խաղաղության ուղին, եւ ես Ձեզ քաջալերում եմ այս տարի վերջնական տեսքի բերել պայմանագիրը:

Իմ վարչակազմը պատրաստ է ձեռնարկել համարձակ նախաձեռնություններ, որոնք կօգնեն հարթել ճանապարհը դեպի խաղաղություն: Ես խնդրել եմ Եվրոպայի գծով գլխավոր տնօրեն Մայքլ Քարփենթերին տեղեկացնել Ձեզ որոշ քայլերի մասին, որոնք մենք կուզենայինք ձեռնարկել եւ ստանալ Ձեր կարծիքն Ադրբեջանի հետ քննարկումների վերաբերյալ:

Ինչպես անցյալ ամիս Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովում հիշատակվեց՝ այժմ եկել է պահը վերահաստատելու հանձնառությունը Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը եւ խաղաղության հիմնարար սկզբունքներին: Ավելի պայծառ ապագան հասանելի է, եւ ես անհամբեր սպասում եմ Ձեզ հետ աշխատանքին՝ այն բաց չթողնելու համար»:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՎԱՏԹԱՐԱՑԵԼ Է

2024 թվականի հոկտեմբերի 18-ին Քեյփթաունում տեղի ունեցած համաժողովում Դատավորների եվրոպական միությունը (EAJ) խոր հիասթափությամբ եւ մտահոգությամբ արձանագրում է Հայաստանում պաշտոնատար անձանց կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցման չարաշահումների եւ դատավորների անկախությանը միջամտության փաստը՝ նշելով 2023 թվականի հուլիսի 2-ին եւ 14-ին Աթենքում կայացած տարեկան համաժողովում նույնանման բանաձեւի ընդունումից հետո վիճակը ոչ միայն չի բարելավվել, ընդհակառակը՝ վատթարացել է:

Վերոնշյալի կապակցությամբ Դատավորների եվրոպական միությունն արձանագրում է.

Որպես դատավորների անկախության նկատմամբ միջամտություն եւ օրենքի գերակայության սկզբունքի խախտում պետք է դիտարկվեն բոլոր այն դեպքերը, երբ դատավորի դատավարական իրավունքները կարգապահական վարույթների ընթացքում ոտնահարվում կամ բավարար չափով չեն երաշխավորվում:

Որպես դատավորների անկախության նկատմամբ միջամտություն եւ օրենքի գերակայության սկզբունքի խախտում պետք է դիտարկվեն բոլոր այն դեպքերը, երբ դատական իշխանությանը սպասարկող վարչական մարմինները ՁԼՄ-ները եւ սոցիալական մեդիան օգտագործում են դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցումը նախաձեռնելու եւ պահանջելու նպատակով:

Որպես դատավորների անկախության նկատմամբ միջամտություն եւ օրենքի գերակայության սկզբունքի խախտում պետք է դիտարկվեն այն բոլոր դեպքերը, երբ կարգապահական վարույթներ հարուցողները ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեն կարգապահական վարույթներին լուծում տվող անձանց վրա:

Որպես դատավորների անկախության նկատմամբ միջամտություն եւ օրենքի գերակայության սկզբունքի խախտում պետք է դիտարկվեն բոլոր այն դեպքերը, երբ դատավորների գնահատումն իրականացվում է այնպիսի մարմնի կողմից, որում մեծամասնություն են կազմում ոչ դատավոր անդամները:

Որպես դատավորների անկախության նկատմամբ միջամտություն եւ օրենքի գերակայության սկզբունքի խախտում պետք է դիտարկվեն բոլոր այն դեպքերը, երբ դատավորների վրա շարունակական ճնշում է գործադրվում՝ գործունեության գնահատման շատ կարճ ժամկետ սահմանելով եւ անհարկի հաշվետվություններ ներկայացնելու լայնածավալ համակարգ ներդնելով

Վերոգրյալների հիման վրա՝ Դատավորների եվրոպական միությունը.

Ակնկալում է հայաստանյան իշխանություններից՝ զերծ մնալ նման քայլերից

Հրավիրում է Եվրոպայի խորհրդի իրավասու մարմիններին եւ այլ կառույցներին հետեւելու Հայաստանում տեղի ունեցող զարգացումներին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու նպատակով եւ ակնկալում է գնահատման եւ կարգապահական վարույթների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի առաջարկությունների անշեղ հետեւում եւ ոչ թե շրջանցում:

## ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց վերապատրաստման դասընթացներին մասնակցող Հայաստանի եւ Սփյուռքի տարբեր թեմերից ժամանած քահանաներին: Այս մասին հայտնում են Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգից:

Նորին Սրբությունն իր հայրական օրհնությունը բերեց հոգեւոր հայրերին՝ հաստատելով, որ վերապատրաստման դասընթացները հնարավորություն են տալիս աղոթական մթնոլորտի մեջ զորացնելու հոգեւոր կյանքը, նոր գիտելիքներ ձեռքբերելու, անձնապես շփվելու եւ փոխանակվելու միմյանց փորձառությամբ, ինչը կնպաստի իրենց հովվական ծառայության եւ Եկեղեցու առաքելության առավել արդյունավորմանը:

Նորին Սրբությունը հորդորեց եկեղեցականներին իրենց գովարժան ու անսակարկ ծառայությամբ, ըստ ամենայնի, աջակցել հայրենական ու հոգեւոր կյանքում ծառացած մարտահրավերների հաղթահարմանը՝ հետամուտ լինելով նաեւ հոգեւոր, ազգային արժեքների պահպանմանն ու զորացմանը եւ այդ արժեքներով ազգի զավակների կրթությանը: Վերջում Վեհափառ Հայրապետը պատասխանեց հոգեւորականների հարցերին, որոնք առնչվում էին Եկեղեցու կանոնական, ծիսական եւ հովվական կյանքի հիմնախնդիրներին:

ԴԱՏԱԽԱԶԸ ՔՐԳՈՐԾԸ ՀԱՆՁՆԵԼ Է ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆ

# ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՆԱԽԿԻՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ԱՅԼՈՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկացնում են, որ «Երեւանի մետրոպոլիտենի նախկին տնօրենի եւ այլոց վերաբերյալ» քրեական գործը դատախազը հանձնել է հակակոռուպցիոն դատարան:**

«Փ.Յ.-ն, 2008 թվականից մինչեւ 2019 թվականը զբաղեցնելով «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Մետրոպոլիտեն) տնօրենի պաշտոնը, պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ կատարել է խոշոր եւ առանձնապես խոշոր չափերով հափշտակություններ:

Մասնավորապես,

Փ.Յ.-ն իր որդու հետ 2008 թվականի սեպտեմբերի 1-ին կնքել է աշխատանքային պայմանագիր, որի հիման վրա՝ որդին զբաղեցրել է Մետրոպոլիտենի «Կապի եւ ազդանշանման» մասնաճյուղի պետի տեղակալի, իսկ 2014 թվականի օգոստոսի 4-ից՝ «Ազդանշանման եւ կապի» մասնաճյուղի պետի պաշտոնները: Փ.Յ.-ն Մետրոպոլիտենի տնօրենների խորհրդի նախագահի օժանդակությամբ ստացել է խորհրդի անդամների միաձայն հավանությունը՝ Մետրոպոլիտենի՝ Երեւան քաղաքի Բաղրամյան պողոտայի 76 շենքի (կապի տան) 944,5 քմ մակերեսով նկուղային հարկն օտարելու վերաբերյալ: Ընկերության տնօրենների խորհրդի գրության հիման վրա՝ Երեւանի քաղաքապետը 2013 թվականի օգոստոսի 20-ին գրությամբ դիմել է ՀՀ վարչապետին՝ առաջարկելով հանձնարարել համապատասխան գերատեսչությանը՝ հրապարակային սակարկությունների միջոցով նշված տարածքը ներկայացնել օտարման: «Պետական գույքի գույքագրման եւ գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի գնահատողը 2013 թվականի հոկտեմբերի 23-ին կազմել է գնահատման կեղծ հաշվետվություն: Հաշվետվության համաձայն՝ 944,5 քմ մակերեսով տարածքի շուկայական արժեքը 2013 թվականի հոկտեմբերի 12-ի դրությամբ կազմել է 106 մլն 850 հազար դրամ: Գնահատողը վերոնշյալ փաստաթղթում դիտավորությամբ չի ներառել շենքի նկուղային հարկաբաժնի տարածքի համար հատկացված՝ 0.19459 հա եւ 0.0038736 հա մակերեսներով հողամասերն ու դրանց շուկայական արժեքները: Արդյունքում՝ գույքը, որի իրական շուկայական արժեքը 2013 թվականի հոկտեմբերի 12-ի դրությամբ կազմել է 194 մլն 880 հազար դրամ, գնահատվել է 106 մլն 850 հազար դրամ: 2013 դեկտեմբերի 4-ին անշարժ գույքն աճուրդի է դրվել, մեկնարկային գին է սահմանվել 106 մլն 850 հազար դրամը: 2013 թվականի դեկտեմբերի 4-ին կայացած առաջին եւ նույն թվականի դեկտեմբերի 16-ին կայացած երկրորդ աճուրդներին որեւէ անձ (այդ թվում՝ Մետրոպոլիտենի տնօրենի որդին) չի մասնակցել, գույքն աճուրդով չի վաճառվել: Մետրոպոլիտենի տնօրենի որդին անշարժ գույքը գնել է երրորդ աճուրդի ժամանակ՝ 2013 թվականի դեկտեմբերի 26-ին՝ 75 մլն 393 հազար դրամով:

Մետրոպոլիտենի տնօրենն իր որդու օժանդակությամբ հափշտակել է 7 մլն 104 հազար դրամ, մեկ այլ դեպքում՝ որդու եւ Մետրոպոլիտենում աշխատող որդու ընկերոջ օժանդակությամբ՝ 38 մլն 505 հազար դրամ:

Մետրոպոլիտենի տնօրենը, Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի նախկին տեղակալի խնդրանքով, աշխատանքի է ընդունել երեք վարորդի, ովքեր ընկերությունում փաստացի չեն աշխատել, փոխարենը՝ տարիներ շարունակ որպես վարորդ՝ սպասարկել են Քաղաքապետարանի վերոնշյալ պաշտոնյային ու նրա ընտանիքի անդամներին: Մետրոպոլիտենի բյուջեից 2012 թվականի օգոստոսից մինչեւ 2018 թվականի հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում երեք վարորդներին վճարվել է 11 մլն 147 հազար դրամ աշխատավարձ, հատկացվել է 11 մլն 887 հազար դրամի բենզին, ավտոմեքենաների տեխսպասարկման համար՝ 5 մլն դրամ: Արդյունքում՝ Մետրոպոլիտենի տնօրենը վատնել է շուրջ 28 մլն դրամ:

Մետրոպոլիտենի տնօրենը ընկերության կարիքների համար ձեռք բերված բենզինից, 2009 թվականի հոկտեմբերից մինչեւ 2019 թվականի մարտն ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր ամիս տարբեր խմբաքանակներով հափշտակել է 39 մլն 963 հազար դրամի 110 հազար լիտր բենզին:

Մետրոպոլիտենի տնօրենը 2015 թվականի հուլիսի 1-ին աշխատանքի է ընդունել քաղաքացու, ով աշխատանքի չի հաճախել, չի կատարել իր աշխատանքային պարտականությունները, սակայն Մետրոպոլիտենի բյուջեից 2015-2018 թվականներին ստացել է 7 մլն 120 հազար դրամ աշխատավարձ:

Մետրոպոլիտենի տնօրենը 2011 թվականի մայիսի 27-ին կնքած պայմանագրով աշխատանքի է ընդունել մեկ այլ քաղաքացու, ով նույնպես աշխատանքի չի հաճախել, սակայն ընկերության բյուջեից 2011-2014 թվականներին ստացել է 4 մլն դրամ աշխատավարձ:

Մետրոպոլիտենի տնօրենը, խախտելով «Գնումների մասին» օրենքի պահանջը, առանց մրցույթ հայտարարելու եւ անցկացնելու, 2017 թվականի օգոստոսի 4-ին Մետրոպոլիտենի անունից ՍՊ ընկերության հայաստանյան մասնաճյուղի հետ կնքել է պայմանագիր, որը նույնական է եղել նախորդ տարում կնքած պայմանագրի առարկային, սակայն պայմանագրի արժեքը 220 հազար եվրոյով ավելի է եղել:

Դատախազը 2024 թվականի 2024 թվականի սեպտեմբերի 12-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել Մետրոպոլիտենի տնօրենի նկատմամբ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (առանձնապես խոշոր չափերով յուրացում կատարելը) (7 դրվագ), գործող Քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով (իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ վստահված խոշոր չափի գույքը հափշտակելը), Մետրոպոլիտենի տնօրենի որդու նկատմամբ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (առանձնապես խոշոր չափերով յուրացում կատարելուն օժանդակելը) (երկու դրվագ): Հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել եւս հինգ անձի նկատմամբ: Մետրոպոլիտենի տնօրենի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց է ընտրվել 5 մլն դրամ գրավը, Մետրոպոլիտենի տնօրենի որդու նկատմամբ՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

2024 թվականի հոկտեմբերի 15-ին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերը հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

Նախնական դատալսումների ընթացքում կներկայացվի գույքային հայց»,- ասված է հաղորդագրության մեջ:

*ՀՀ գլխավոր դատախազություն*

44-ՕՐՅԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԸ ՆԵՐԿԵԼՈՒ ԿԱՍԿԱԾԱՆՔ

# 62–ԱՄՅԱ ԿԻՆ Է ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ

**ԶԼՄ-ներում տարածվել եւ քննարկվում էր մի տեսանյութ:**

Հոլովակում երեւում էր, թե ինչպես է մի կին ներկում Երեւանի Պուշկինի փողոցի շենքերից մեկին պատկերված 44-օրյա պատերազմի մասնակիցների դիմանկարները: Այս մասին գրել է ՆԳ նախարարի խոսնակ Նարեկ Սարգսյանը:

«ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ Կենտրոնական բաժնի ծառայողների ձեռնարկած ծավալուն օպերատիվ հետախուզական միջոցառումների շնորհիվ քիչ առաջ (խմբ.) հայտնաբերվել եւ խուլիգանություն կատարելու կասկածանքով ձերբակալվել է մայրաքաղաքի 62-ամյա բնակիչ Հասմիկ Գ.-ն:

Նա եւ կազմված փաստաթղթերը կներկայացվեն քննչական կոմիտե»,- հայտնել է նա:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դատախազը 2024 թվականի հոկտեմբերի 17-ին հաստատել է սպանության փորձ կատարելու եւ ապօրինի կերպով հրազեն պահելու մեջ մեղադրվող Ա.Ս.-ի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերը հանձնել Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Արագածոտնի մարզային քննչական վարչությունում քննված քրեական վարույթով պարզվել է, որ 2023 թվականի օգոստոսի 8-ին Ա.Ս.-ն, տեղեկանալով, որ իր հորը՝ Ռ.Ս.-ին, տարիներ առաջ սպանած Վ.Գ.-ն Աշտարակ քաղաքում գտնվող սրճարաններից մեկում է, նրան սպանելու նպատակով նույն օրը՝ ժամը 21:30-ի սահմաններում, գնացել է նշված սրճարանի ավտոկայանատեղի ու թաքնվել: Երբ Վ.Գ.-ն, ժամը 22:00-ի սահմաններում, մոտեցել ու նստել է ավտոմեքենան, Ա.Ս.-ն իր մոտ ապօրինի պահվող ու դեռեւս չհայտնաբերված հրազենով չորս անգամ կրակել է Վ.Գ.-ի ուղղությամբ:

Հանցագործությունն ավարտին չի հասցվել: Կրակված գնդակներն աննշան շեղությամբ չեն դիպել Վ.Գ.-ին: Ա.Ս.-ն դեպքի վայրից դիմել է փախուստի:

Դատախազը 2024 հոկտեմբերի 3-ին Ա.Ս.-ի նկատմամբ հարուցել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասով (սպանության փորձ) եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով (ապօրինի կերպով հրազեն, փամփուշտ ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ կրելը):

Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից մեղադրյալ Ա.Ս.-ի նկատմամբ որպես խափանման միջոցներ էին կիրառվել տնային կալանքը, գրավը եւ բացակայելու արգելքը:

Դատախազի ներկայացրած հատուկ վերանայման բողոքը 2024 թվականի հոկտեմբերի 10-ին բավարարվել է: Ա.Ս.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված է կալանքը:

## ՀՕԳՈՒՏ՝ ՀՀ–Ի

Ոսկու հանքանյութի ապօրինի արդյունահանում կատարած Վ.Ա.-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության կբռնագանձվի 327.5 միլիոն դրամ՝ որպես պետությանը պատճառված վնաս, ինչպես նաեւ 16.3 միլիոն դրամ պետական տուրք: Դատախազության հայցադիմումը 2024 թվականի հոկտեմբերի 2-ին ամբողջությամբ բավարարվել է Հակակոռուպցիոն դատարանի վճռով:

Դատախազը 2024 թվականի հունվարի 16-ին հակակոռուպցիոն դատարանի վճռի դեմ ներկայացրել էր վերաքննիչ բողոք, որը բավարարվել էր եւ գործն ուղարկվել էր նոր քննության: Նոր քննության արդյունքում՝ 2024 թվականի հոկտեմբերի 2-ին, հակակոռուպցիոն դատարանի վճռով Դատախազության հայցադիմումն ամբողջությամբ բավարարվել է եւ որոշվել է Վ.Ա.-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 327.5 միլիոն դրամ՝ որպես պետությանը պատճառված վնաս, ինչպես նաեւ 16.3 միլիոն դրամ պետական տուրք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 21-ից 22-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 96 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԴ

### ՇԱՂԳԱՄԻ, ԳԱԶԱՐԻ... ՓԱՌԱՏՈՆԵՐԸ Ե՞ՐԲ ԵՆՔ ՆՇԵԼՈՒ

2024 թ. հունիսի 29-ին Նիկոլ Փաշինյանի հայրենի Ենոքավան գյուղում կայացավ Հայաստանի դեղաբույսերի եւ ծաղիկների «ՀայԲույս 2024» փառատոնը, որի մասնակիցները պատրաստեցին ամենախոշոր՝ 50 մետրանոց խաղաղության բրդուճը՝ լավաշից, հայկական խոտաբույսերից եւ տարբեր երկրներում արտադրված պանրից: Օգոստոսի 10-ին Իջեւանում կայացավ «Ֆեստիվառ» զբոսաշրջային-երաժշտական փառատոնը: Հիմա էլ Տավուշի մարզպետարանը աչքալուսանք է տալիս՝ «հոկտեմբերի 26-ին Տավուշի մարզի Հովք գյուղի Ուսուցման Կանաչ Կենտրոնում տեղի կունենա Դդմի տոնը, որի ընթացքում կլինեն ժամանցային կատարումներ ու ներկայացումներ, պարային համարներ, հատուկ մրցանակ կտրվի Հայաստանում ամենամեծ դդում աճեցնող ֆերմերին»: Հայկական բույսերի տոնը նշեցիք, հայկական խոտաբույսերից եւ տարբեր երկրներում արտադրված պանրից, լավաշից 50 մետրանոց բրդուճը սարքեցիք, հոկտեմբերի 26-ին էլ դդմի տոնն եք նշելու. բա շաղգամի, գազարի, վարունգի, պոմիդորի, խաղողի, ճմերուկի, բադրիջանի փառատոները ե՞րբ եք նշելու:

### ՓՈՂ ԵՆ ՀԱՎԱՔՈՒՄ, ՈՐ ԴԻՐՔԵՐՈՒՄ ՄՆՎԵՆ

Նիկոլ Փաշինյանի իշխանությունը հանրության աչքի առաջ բանակի նկատմամբ հոգատարություն էր խաղում, ժամկետային զինծառայողներին ելակով կերակրում: Բանակում սննդի մատակարարման վիճակն ինչպե՞ս է հիմա՝ Նիկոլ Փաշինյանի իշխանության 7-րդ տարում: Պայմանագրային զինծառայողներն ասացին, որ երկշաբաթյա մարտական հերթապահության, սահմանային հենակետեր ծառայության գնալու ժամանակ յուրաքանչյուրը 30 հազար դրամ է տալիս եւ հավաքված գումարով հենակետի անձնակազմի համար սնունդ են գնում: Վերջերս վարժական հավաքից վերադարձած Տավուշի մարզի բնակիչները լրագրողիս հայտնեցին, որ իրենք հավաքի ժամանակ գումար են հավաքել՝ խանութից սնունդ գնելու համար:

### ԷՔՍԿՈՒՐՍԻՄ՞ ԵՆ ՏԱՐԵԼ

Կիրանցից Ադրբեջանին հանձնված տարածքներում ադրբեջանցիները ակտիվություն են դրսեւորում: Բնակիչները հայտնեցին, որ այդ տարածքներում աշխատող ադրբեջանցի զինվորականները հավանաբար ականներ են որոնում: Ադրբեջանցիները Մազամ գյուղից մինչեւ Ջողազի լճի թերակղզի (որ հանձնվել է Ադրբեջանին) հատվածում կամուրջ են կառուցել: Ջողազի լճի ձախ ափին գտնվող Մազամլի գյուղի տները նախկինում մեր հենակետերից լավ տեսանելի, դիտարկվող էին, հիմա Կիրանցի տները կարող են հարմար թիրախներ լինել ադրբեջանական հենակետերից: Ադրբեջանցիները հավաքվում են Ադրբեջանին հանձնված, Կիրանց գյուղի՝ միջպետական ավտոճանապարհի կամրջի վրա. նրանք դպրոցական երեխաների են բերել Ադրբեջանին հանձնված տարածքներ: Նրանց համար էքսկուրսիա՞ են կազմակերպել դեպի սահմանագոտի...:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

## ԿԱՄՐՋԵԼՈՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱՆ

# Telcell-Ը ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ ԷՐ

**Աբխարհի 30 երկրի 150 մասնակից եւ խորհրդատու հոկտեմբերի 7-11-ը Հայաստանում մեկ հարկի տակ համախմբվել էին «Թվային հորիզոններ. Միավորելով նորարարությունները կայուն ապագայի համար» խորագրով գործարար խորհրդատվության միջազգային ամենահեղինակավոր CMC համաժողովի շրջանակում:**

Խորհրդատվական եւ գործարար համայնքի նշանակալի իրադարձության նախաձեռնողն էր Կառավարման խորհրդատվության Հայաստանի ինստիտուտը:

Թվային դարաշրջանում կարեւոր այս ոլորտի նորամուծությունները եւ առաջնահերթությունները քննարկելու նպատակով մեկտեղված առաջատար մասնագետների թվում էր նաեւ համաժողովի հովանավոր եւ ֆինանսական գործընկեր Telcell ընկերության գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանը:

Բիզնես միջավայրում ժամանակի թվային լուծումներին համընթաց քայլելուն նվիրված պանելային քննարկմանը Արտյոմ Ղազարյանը ներկայացրեց Telcell-ի՝ թվայնացմանն ուղղված կարեւորագույն եւ հավակնոտ նախագծերը՝ Միասնական տոմսային համակարգը ու IPO-ն (Initial Public Offering- բաժնետոմսերի նախնական հրապարակային առաջարկ), որոնք վերափոխում են մշակույթը:

Երկիր ժամանածների թվում էին այնպիսի հեղինակավոր մասնագետներ, ինչպիսիք են ITC-ի Առեւտրի կայուն զարգացման բաժնի ղեկավար Ջոզեֆ Վոզնյակը, ամերիկյան McKinsey կորպորացիայի Ցյուրիխի գրասենյակի ներկայացուցիչ Լեոնիդ Կիրակոսյանը, առաջնորդության խորհրդատու Լարս Սուդմանը, Գործարար Դեյվիդ Յանգը եւ շատ ուրիշներ:

Միջոցառման նպատակն էր խթանել գիտելիքի փոխանակումը, ամրապնդել միջազգային համագործակցությունը եւ ստեղծել մասնագիտական աճի համար բարենպաստ միջավայր ոլորտի մասնագետների եւ բիզնես էկոհամակարգի համար, հետեւաբար համաժողովի մասնակիցներն իրենց ելույթներում անդրադարձել են ոլորտի մի շարք զարգացումներին, այդ թվում՝ խորհրդատվության, թվայնացման, շրջակա միջավայրի, կայունության, բիզնես միջավայրի խնդիրներին եւ մի շարք այլ ուղղություններին առնչվող թեմաներին:

Համաժողովի բրենդավորման հիմնական սիմվոլը մատնահետքն էր՝ խորհրդանշելով մասնագիտական հավաքի ազդեցությունն ու ներկայացնելով այն եզակի եւ մնայուն «հետքը», որը միջոցառումը նպատակ ուներ թողնել թվային փոխակերպման եւ կայունության ոլորտներում: Մատնահետքը խորհրդանշում է աշխարհում անհատական եւ առանձնահատուկ հետք թողնելու գաղափարը՝ համաժողովի նպատակին համահունչ՝ կամրջելու նորարարությունները կայուն ապագայի համար:

## ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Ա. ՍԻՄՈՆՅԱՆԸ ԳԼՈՒԽ ԷՐ ԳՈՎՈՒՄ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը օրերս լրագրողների հետ զրույցում գլուխ էր գովում, թե իրեն հաջողվում է ԱԺ նիստերը լավ վարել եւ վիճաբանությունների դեպքում կարողանում է հարթել իրավիճակը:

Ավելին՝ Ալեն Սիմոնյանը վստահեցրեց, որ ՔԿ ղեկավարի եւ իշխանական պատգամավորների վիճաբանության օրը եթե ինքը լիներ ԱԺ նիստերի դահլիճում, նման միջադեպ չէր լինի:

Բայց արի ու տես, որ ԱԺ վիճաբանություններում մեծ մասամբ հենց Ալեն Սիմոնյանն է սադրում իրավիճակը՝ իրեն հատուկ ոչ պատշաճ հայտարարություններով եւ բառապաշարով:

Հերթական դեպքը արձանագրվեց հենց 1 օր առաջ:

Ամեն բան սկսվեց, երբ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Քրիստինե Վարդանյանի ելույթից հետո Սիմոնյանը հերթական անգամ «ռեպլիկ» թողեց, ինչից հետո լարվեց իրավիճակը, եւ Սիմոնյանը կոպիտ արտահայտություններով վիրավորեց ընդդիմադիր կին պատգամավորներին:

Ահա այսպես է Ալեն Սիմոնյանին հաջողվում վարել նիստերը՝ սադրելով, տգեղ «ռեպլիկներ» թողնելով եւ անգամ կին պատգամավորների հասցեին վիրավորական արտահայտություններ անելով:

*ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

### ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ ՄՐՑՈՒՅԹԻՆ

«Միսս Տիեզերք Արմենիա» ընտրված Իրինա Զախարովան չի կարողանա մասնակցել «Միսս Տիեզերք» մրցույթին: Այս մասին տեղեկանում ենք Miss Universe Armenia-ի ինստագրամյան էջից: Հաղորդագրության մեջ ասվում է, որ Զախարովան մրցույթին չի կարող մեկնել ընտանեկան հարցերի պատճառով:

«Ցավոք, պետք է տեղեկացնենք, որ «Միսս Տիեզերք Արմենիա» մրցույթի հաղթող Իրինա Զախարովան չի կարողանա մեկնել Մեխիկո՝ մասնակցելու «Միսս Տիեզերք» մրցույթին:

Մենք երկար նախապատրաստական փուլ ենք անցել եւ յուրաքանչյուրս վճռական էր՝ լավագույնս ներկայանալու: Այնուամենայնիվ, ընտանեկան հանգամանքների պատճառով Իրինան ստիպված էր դժվարին որոշում կայացնել՝ հրաժարվելով մրցույթին մասնակցությունից:

Շնորհակալ ենք բոլորին այս դժվարին շրջանում աջակցության եւ հասկանալու համար: Իրինան շատերի համար ոգեշնչման աղբյուր է, եւ վստահ ենք՝ առջեւում նա շատ հնարավորություններ կունենա»,-ասված է հաղորդագրության մեջ:

Հիշեցնենք, որ «Միսս Տիեզերք Արմենիա» մրցույթն այս տարի անցկացվել էր Մոսկվայում: Մրցույթի անցկացման իրավունքները ձեռք է բերել Յուլիա Պավլիկովան: Ոլորտի հայ մասնագետներն ավելի վաղ իրենց դժգոհությունն էին հայտնել առ այն, որ մրցույթում Հայաստանը պետք է ներկայացներ ազգությամբ ոչ հայ մասնակից:

«Միսս Տիեզերք 2024»-ն անցկացվելու է Մեխիկոյում՝ նոյեմբերի 16-ին:

*ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը այցելել է Լոռու մարզի Տաշիր քաղաք, որտեղ տեղի է ունեցել հանդիպում արցախցիների հետ: Հանդիպմանը մասնակցել է Տաշիր քաղաքում եւ հարակից գյուղերում բնակություն հաստատած արցախահայությունը: Վրթանես Սրբազանը հարցերի միջոցով ընդհանուր պատկերացում է կազմել հիշյալ համայնքում բնակվող արցախցիների կացության վերաբերյալ:

«Հանդիպման ընթացքում տեղի է ունեցել նաեւ հետաքրքիր միջադեպ. Մարտակերտի շրջանի Վանք գյուղի բնակիչներից մեկը մոտեցել է Սրբազանին եւ հանձնել բանալիներ: Պարզվեց, որ վերջինս Գոռ Բաղդասարյանի ընկերն է, ով 90-ական թվականներին Գանձասարը պաշտպանողների շարքում էր: 2023 թվականի տարհանման ժամանակ Գոռը իր հետ վերցրել էր Գանձասարի վանքի բանալիները: Հանդիպման ժամանակ նրա ընկերը բանալիները փոխանցեց Վրթանես Սրբազանին՝ հույս հայտնելով, որ բոլորս կրկին կվերադառնանք հայրենի Արցախ եւ նույն բանալիներով կբացենք հնագույն վանական համալիրի դռները»:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 22 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԾՐԱԳԻՐ

## Telcell–Ը ՏՐԱՆՍՊՈՐՏԻ 10 ԱՆՎՃԱՐ ՏՈՄՍ Է ՆՎԻՐՈՒՄ

Երեւանի քաղաքապետարանի եւ Telcell ընկերության համատեղ ներդրած «Միասնական տոմսային համակարգ»-ի կայացման նպատակով Telcell Wallet հավելվածի օգտատերերին նոր անակնկալ է սպասում:

Telcell Wallet հավելվածով տրանսպորտի ուղեւորների առաջին անգամ ձեռքբերման եւ անկանխիկ վճարման համակարգի միջոցով առաջին տոմսի գնումից հետո, որպես խրախուսում, Telcell-ը տրանսպորտի 10 անվճար տոմս կնվիրի:

Նվեր տոմսերը հասանելի կլինեն Telcell Wallet հավելվածի «Տրանսպորտ» բաժնում: Տոմսերը վավերական կլինեն 30 օր՝ ուղեւորների ստանդարտ ժամկետի համաձայն:

Ակցիան իրականացվում է Telcell Wallet հավելվածով տոմսերի ձեռքբերման կանխիկից անկանխիկի սահուն անցում ապահովելու նպատակով՝ պարզ ու գրավիչ արշավի շնորհիվ տոմսերի միասնական համակարգի զարգացման տեսլականով:

Ակցիան կգործի հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 30-ը:

*Ինչպե՞ս ստանալ 10 անվճար տոմս*

1. Մուտք գործել Telcell Wallet հավելված
2. Գլխավոր էջի «Ծառայություններ» բաժնում սեղմել «Տրանսպորտ»
3. Սեղմել «Գնել ուղեւորում», ընտրել տրանսպորտային միջոցը՝ «Տրոլեյբուս», «Ավտոբուս եւ մետրո» կամ «Օդանավակայան», այնուհետեւ տոմսի քանակը, վճարման եղանակը եւ սեղմել «Շարունակել»
4. Սեղմել «Վճարել»
5. Վճարումը հաստատելուց հետո օգտատերը ստանում է ծանուցում տոմսերի նվերների մասին, որոնք հայտնվում են «Ուղեւորում» բաժնում: Հավելվածում տրանսպորտի առաջին տոմսի գնման ավարտից հետո օգտատերը ավտոմատ կերպով կստանա տրանսպորտի 10 անվճար տոմս (ավտոբուս/մետրո): Նվերը յուրաքանչյուր օգտատիրոջ համար միանվագ է:

*Անհրաժեշտ է իմանալ*

- Արշավին կարող են մասնակցել Telcell Wallet հավելվածի ամբողջովին նույնականացում անցած օգտատերերը, որոնք կցել են անձնագիրը, իրենց պատկանող բանկային քարտը կամ ունեն Telcell Wallet բացված բանկային հաշիվ:
- Եթե նույնականացումը չի ստացվում անհրաժեշտ է կապ հաստատել 8830 կարճ համարով կամ գրել անձնական նամակ:
- Օդանավակայանի ուղեւորում գնելու դեպքում նվեր է տրվում ավտոբուսի կամ մետրոյի ուղեւորում (ոչ օդանավակայանի):
- Նվեր չի տրվում տերմինալից ուղեւորում գնելիս, միայն այն դեպքում, երբ առաջին տոմսը գնվել է Telcell Wallet-ով (անկախ գնված ուղեւորումների քանակից):

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

## ԱԳՐՈԱՆՏԱՌԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

**Հայաստանում կանցկացվի ագրոանտառաբուծության առաջին կոնֆերանսը (AFCA 2024): Այն տեղի կունենա հոկտեմբերի 25-ին՝ ժամը 9:00-ից, Holiday Inn Yerevan-ում:**

Կոնֆերանսը կիրականացվի Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության (SDC) ֆինանսավորմամբ մեկնարկած «Հայաստանում անտառների վերականգնում եւ կլիմայի փոփոխություն» (FORACCA) նախագծի շրջանակում: FORACCA-ի նախնական փուլում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) հետազոտական թիմը իրականացնում է ագրոանտառաբուծական համակարգերի նախագծմանն ու ներդրմանն ուղղված ուսումնասիրություն:

Ագրոանտառաբուծության կոնֆերանսի նպատակն է ներկայացնել եւ քննարկել Հայաստանում ագրոանտառաբուծության զարգացման հեռանկարները՝ բնապահպանական եւ սոցիալ-տնտեսական տեսանկյուններից:

«Մենք հավատում ենք, որ այս միջոցառումը կխթանի համագործակցությունը կարեւոր դերակատարների միջեւ, ինչի շնորհիվ հնարավոր կլինի ներառական եւ բարենպաստ միջավայր ստեղծել Հայաստանում ագրոանտառաբուծական համակարգերի ներդրման համար», - նշում է ՀԱԱՀ ծրագրի ավագ համակարգող, ռեկտորի խորհրդական Էմիլ Գեւորգյանը:

«Ագրոանտառային տնտեսությունը ներուժ ունի բարձրացնելու հողի բերրիությունը եւ մշակաբույսերի բերքատվությունը, ավելացնելու արտադրողականությունը միաժամանակ նպաստելով լանդշաֆտների եւ կենսաբազմազանության պահպանությանը, նվազեցնելու մշակաբույսերի վարակներն ու հիվանդությունները եւ բարելավելու սննդամթերքի որակը, խթանելու ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Մեր նպատակն է Հայաստանի մի քանի մարզերում ներդնել տարբեր ագրոանտառաբուծական համակարգեր որոնք կարող են նախադեպ հանդիսանալ տեղական եւ միջազգային գործընկեր կառույցների համար կլիմայի փոփոխության համատեքստում հիմնախնդիրները հասցեագրելու գործում», - նշում է Շվեյցարիայի համագործակցության գրասենյակի ներկայացուցիչ Համազասպ Դանիելյանը:

Նախատեսվում է, որ կոնֆերանսին ողջույնի խոսքով հանդես կգան ՀՀ Վարչապետի գլխավոր խորհրդական Համբարձում Մաթեւոսյանը, Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության տարածաշրջանային տնօրեն Ուրսուլա Լաուբլին, ՀՀ Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, ՀԱԱՀ ռեկտորի պարտականությունները կատարող Հրաչյա Ջաքոյանը:

Կոնֆերանսի ընթացքում կքննարկվեն հետեւյալ թեմաները՝ «Ագրոանտառաբուծության կարեւորությունը եւ ակնկալվող արդյունքները», «Ագրոանտառաբուծության ներածություն եւ ներկա վիճակը Եվրոպայում»: Կներկայացվեն «Հայաստանում անտառների վերականգնում եւ կլիմայի փոփոխություն» (FORACCA) նախագծի եւ ագրոանտառաբուծության բաղադրիչի նախնական արդյունքները, ինչպես նաեւ «Ագրոանտառաբուծական պրակտիկաները Հայաստանում»:

Նախատեսվում է նաեւ երեք պանելային քննարկում՝ «Խթանել սոցիալական ներառականությունը. Համայնքների կարիքները եւ օգուտները», «Աջակցել ագրոէկոլոգիական վերափոխմանը տնտեսական կայուն զարգացման համար», «Նպաստել հնարավորությունների միջավայրի ձեւավորմանը. Իրավական մարտահրավերներն ու հնարավորությունները» խորագրերով:

Կոնֆերանսի ավարտին կազդարարվի Ագրոանտառաբուծության հայկական ասոցիացիայի նախաձեռնող խմբի աշխատանքների մեկնարկը:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ԵՎ Kapitalbank

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ Է ՍՏՈՐԱԳՐՎԵԼ

**Ուրախությամբ տեղեկացնում ենք, որ Պեկինում անցկացվող Sibos 2024 միջազգային համաժողովի շրջանակում «Կոնվերս բանկ» «ՓԲԸ»-ը շրջանակային համաձայնագիր է ստորագրել ուզբեկական JSCB Kapitalbank-ի հետ:**

Սա կարեւորագույն քայլ է թե՛ «Կոնվերս բանկի», թե՛ նրա գործընկերների համար, եւ կարեւորագույն փաստաթուղթ՝ ուղղված միջազգային համագործակցության ընդլայնմանն առանցքային ուղղություններում.

- Արտաքին առեւտրային գործարքների ֆինանսավորում՝ հաճախորդներին աջակցություն արտահանման ու ներկրման հարցերում,
- Համագործակցություն ֆինանսական շուկաներում՝ համատեղ գործառնությունների իրականացում արժութային եւ դրամական շուկաներում:

Այս համագործակցությամբ բանկն ընդլայնում է իր միջազգային գործընկերային ցանցը. արդյունքում, իր հաճախորդներին ընձեռում է նոր հնարավորություններ՝ բիզնեսում հաջողելու ու զարգանալու համար:

«Ուզբեկստանի էկոնոմիկան բարեփոխումների շնորհիվ տպավորիչ աճ է ցուցադրում տնտեսության, արտասահմանյան ներդրումների ներգրավման եւ առանցքային ոլորտների զարգացման հարցում: Kapitalbank-ն այդ երկրում փոխակերպման շարժիչ ուժն է, շուկայի առաջատարներից մեկը, որն այս համագործակցության մեկնարկով դառնում է «Կոնվերս բանկի» ռազմավարական գործընկերը ոչ միայն Ուզբեկստանում, այլեւ ողջ Միջին Ասիայում»,-իր խոսքում հայտնել է «Կոնվերս բանկի» Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն Հրանտ Հակոբյանը՝ շնորհակալություն հայտնելով բոլոր աջակիցներին:

Նշենք, որ Sibos 2024-ը Swift միջազգային համակարգի տարեկան ժողովն է, որը կայանալու է հոկտեմբերի 21-24-ը Պեկինում:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

ՅՈՒՅԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԵԼԳԻԱՅՈՒՄ

# «ԵՍ ՎՐԵԺԽՆԴԻՐ ԿԼԻՆԵՄ ԱՇԽԱՐՀԻՑ ՍԻՐՈ ՄԻՋՈՑՈՎ»

**«Ես վրեժխնդիր կլինեմ աշխարհից սիրո միջոցով - Ս. Փարաջանով» վավերագրական ֆիլմն օրերս էկրաններ բարձրացավ նաեւ Բելգիայում: Փարաջանովին նվիրված ֆիլմը հոկտեմբերի 14-18-ը մասնակցել է հեղինակավոր «Film Fest Gent»-ին:**

Հիշեցնենք, որ ավելի վաղ՝ սեպտեմբերի 6-ին, Վենետիկում էր տեղի ունեցել «Ես վրեժխնդիր կլինեմ աշխարհից սիրո միջոցով - Ս. Փարաջանով» վավերագրական ֆիլմի համաշխարհային պրեմիերան հեղինակավոր կինոփառատոնի շրջանակում:

Հիշեցնենք, որ Հայաստանը ներկայացնող ֆիլմն ընդգրկված էր Վենիտիկի 81-րդ միջազգային կինոփառատոնի պաշտոնական ծրագրում, VENICE CLASSICS խմբի մրցութային բաժնում, որտեղ մեկ անվանակարգում մրցում էին 9 ֆիլմ:

Հատկանշականն այն է, որ 20 տարի անց Հայաստանի դրոշը կրկին ծածանվում էր Վենետիկում:

«Ես վրեժխնդիր կլինեմ աշխարհից սիրո միջոցով - Ս. Փարաջանով» ֆիլմը սկսվում է հեղինակի՝ ժամանակակից ռեժիսորի որոշումից: Նա որոշում է լքել այն երկիրը, որտեղ ապրում է՝ կապված դրամատիկ իրադարձությունների բռնկման հետ, ուզում է վերադառնալ հայրենի տուն՝ Հայաստան, որոնելու լուծումներ, թե ինչպես շարունակի ապրել: Փարաջանովի տուն-թանգարանը դառնում է ոգեշնչման վայր (հիմնված իրական իրադարձությունների վրա): Ֆիլմում անցյալը հանդիպում է ներկային:

Փարաջանովի կյանքի եւ ստեղծագործության միջոցով եւ հենց նրա հետ կհետազոտվեն այնպիսի հարցեր ինչպիսինն են մարդու ազատության թեման ոչ ազատ պայմաններում, թե ինչպես են փշալարերը եւ պատերազմները ազդում մշակույթի եւ մշակութային գործիչների կյանքում եւ այլ հարցեր: Կյանքն ու ստեղծագործելը պետք է գոյատեւեն չնայած արգելքներին եւ բռնապետություններին:

Ընդհանուր գաղափարների, նպատակների եւ լուծումների որոնում՝ տարբեր բարիկադներում գնտվող հերոսներով, որոնց միավորում է Փարաջանովի նկատմամբ ունեցած սերը:

Ֆիլմի պատկերի հեղինակն է կանադահայ՝ Նորայր Կասպերը: Ֆիլմն իրականությունից տանում է դեպի աբստրակցիա եւ հակառակը: Նկարահանման ոճը պարունակում է ինչպես ակադեմիական, այնպես էլ հեղինակային տեխնիկա:

Ֆիլմը հայ-ֆրանսիական համատեղ արտադրություն է, որին մասնակցություն է ունեցել նաեւ Մեծ Բրիտանիան:

Ֆիլմի նկարահանումները տեղի են ունեցել Հայաստանում, Սերբիայում, Լատվիայում եւ Գերմանիայում: Երեւանում է նկարահանվել նաեւ ֆիլմի խաղարկային մասը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

## ԱՅՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 20-ամյակի առթիվ անցկացվող երկօրյա բարձր մակարդակի միջազգային համաժողովի հյուրերն ու պաշտպան Անահիտ Մանասյանը այցելել են Հայաստանի ազգային պատկերասրահ:

Պատկերասրահում նրանք մասնակցել են «Ճախրուկ» մշակութային կենտրոնի սաների կողմից պատրաստված համերգային միջոցառմանը:

Երաժշտախմբի հիմնադիր - ղեկավարներն են Աննա եւ Անահիտ Մխիթարյանները, որոնք երեկոյի ամբողջ ընթացքում նվագակցել են խմբի անդամներին:

Օրվա առթիվ Անահիտ Մանասյանը «Ճախրուկ» էթնո երաժշտախմբին հանձնել է շնորհակալագիր՝ երգով եւ երաժշտությամբ՝ համերաշխության, բարության տարածման, առանձնահատկություններով անձանց իրավունքների խթանման համար:

Երեկոյի ավարտին միջազգային համաժողովի հյուրերն ու պաշտպանն այցելել են Հայաստանի պատմության թանգարան՝ Անահիտ աստվածուհու բրոնզե արձանը տեսնելու նպատակով:

«Օմբուդսմանական/Մարդու իրավունքների ազգային հաստատությունները ճգնաժամային իրավիճակներում. Ճկունություն եւ մարտահրավերներ» խորագրով երկօրյա բարձր մակարդակի միջազգային համաժողովը նվիրված է Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հիմնադրման 20-ամյակին՝ որպես երկրում մարդու իրավունքների եւ օմբուդսմանական միակ ազգային հաստատություն, մասնակցում են Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ՄԻՊ հաստատությունների եւ իրավահավասարության մարմինների ղեկավարներ եւ ներկայացուցիչներ ավելի քան 15 պետություններից:

Միջոցառումը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից՝ Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությամբ, իրականացվում է Եվրոպայի խորհրդի Համագործակցության ծրագրերի բաժնի «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում», Եվրոպական միության եւ Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» համատեղ ծրագրերի հետ համագործակցությամբ՝ Եվրոպական միության եւ Եվրոպայի խորհրդի կողմից ֆինանսավորվող եւ Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Հավասարության խթանումը եւ խտրականության բացառումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

## ՍԱՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՆՈՐ ՍԵՐԻԱԼԸ

Ռուսաստանցի կինոռեժիսոր Սարիկ Անդրեասյանը սերիալ է նկարահանելու 1980-1990-ական թվականներին ԽՍՀՄ մոդելային բիզնեսի «ներքին խոհանոցի» մասին:

Անդրեասյան եղբայրների կինոընկերության «Գեղեցկություն» դրամատիկական սերիալի սյուժեն կենտրոնանում է մշակութային կենտրոնի ղեկավար Վերա Իգնատիեւայի վրա, որը որոշում է անցկացնել Խորհրդային Միությունում առաջին գեղեցկության մրցույթը: Պաշտոնյաները համաձայն չեն նրա գաղափարի հետ, եւ երբ մրցույթը հաջողվում է անցկացնել, նա բախվում է մոդելային բիզնեսի դժվար իրողություններին: Ալեքսեյ Գրավիցկու սցենարի հիման վրա նկարահանվելիք ութմասանոց սերիալի դերասանական կազմը դեռ հայտնի չէ:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ԸՄԲԻՇ ՀԱՅԿ ԽԼՈՅԱՆԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆ

Ըմբշամարտի մինչեւ 23 տարեկանների աշխարհի առաջնության եզրափակչում հունահռոմեական ոճի ըմբիշ Հայկ Խլոյանը (97կգ) 11:6 հաշվով հաղթեց բելառուս Աբուբակար Խասլանխանովին ու դարձավ ոսկե մեդալակիր:

## Մ–19 ՀԱՎԱՔԱԿԱՆԸ

Կանանց՝ Հայաստանի Մ-19 հավաքականը հոկտեմբերի 22-24-ը մարզական հավաք կանցկացնի ՀՖՖ Տեխնիկական կենտրոն/ֆուտբոլի ակադեմիայում:

Կանանց Մ-19 հավաքականի գլխավոր մարզիչ Մարիամ Ստեփանյանը հավաքին մասնակցելու համար հրավիրել է հետեւյալ ֆուտբոլիստներին.

*Դարպասապահներ*

Լիլիթ Բաբայան - «Փյունիկ-աղջիկներ»

Շողիկ Սարդարյան - «Ուրարտու-աղջիկներ»

Վիոլետա Մուսախանյան - «Ուրարտու-աղջիկներ»

*Պաշտպաններ*

Անի Օհանյան - «Ուրարտու-աղջիկներ»

Մարիանա Վարդանյան - «Ուրարտու-աղջիկներ»

Լիլիթ Կարապետյան - «Արարատ-Արմենիա-աղջիկներ»

Գրետա Ալեքսանյան - «Արարատ-Արմենիա-աղջիկներ»

Քնարիկ Բաղդասարյան - «Արարատ-Արմենիա-աղջիկներ»

Ջառա Պետրոսյան - «Արարատ-Արմենիա-աղջիկներ»

Լիլիթ Թեւանյան - «Լեռնային Արցախ-աղջիկներ»

Գայանե Գրիգորյան - «Լեռնային Արցախ-աղջիկներ»

Վալենտինա Գրիգորյան - «Լեռնային Արցախ-աղջիկներ»

Ռոզալինա Երիցյան - «Փյունիկ-աղջիկներ»

*Կիսապաշտպաններ/Հարձակվողներ*

Մանե Ասլանյան - «Ուրարտու-աղջիկներ»

Մարիամ Նիգոյան - «Ուրարտու-աղջիկներ»

Էլինա Մարտիրոսյան - «Արարատ-Արմենիա-աղջիկներ»

Տաթեւ Խաչատրյան - «Արարատ-Արմենիա-աղջիկներ»

Արմինե Վարդանյան - «Նոա-աղջիկներ»

Շուշանիկ Հարությունյան - «Ուրարտու-աղջիկներ»

Ռուզաննա Ինջյան - «Ուրարտու-աղջիկներ»

Միլենա Սայադյան - «Ուրարտու-աղջիկներ»

Նարինե Իսկանդարյան - «Արարատ-Արմենիա-աղջիկներ»

Վիկտորյա Հակոբյան - «Արարատ-Արմենիա-աղջիկներ»

Կարինե Մկրտչյան - «Փյունիկ-աղջիկներ»

Սուսաննա Վարդումյան - «Փյունիկ-աղջիկներ»

Անժելիկա Ղահրամանյան - «Լեռնային Արցախ-աղջիկներ»

Աննա Փառեյան - «Նոա-աղջիկներ»

*● Նոյեմբերի 3-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Հոբելյանական հաճախորդ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ՎԱՐԿԱՅԻՆ

**ՀԱՐՑ. Իրավունք ունի՞ գրավառուն (բանկ, վարկային կազմակերպություն, գրավատուն) առանց պարտադանին տեղյակ պահելու (ծանուցելու) վաճառել գրավ դրված գույքը:**

*Կարինե Մինասյան (31 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ չի կարող: Եթե գրավի պայմանագրով կամ գրավառուի եւ գրավատուի միջեւ կնքված գրավոր համաձայնությամբ առկա է դրույթ՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին, ապա գրավառուն պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է գրավոր՝ պատշաճ ձեւով ծանուցել պարտապանին առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249 հոդվածի 2-րդ մասի:

Միաժամանակ հայտնում ենք, որ նույն հոդվածը սահմանում է նաեւ, որ բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն իրավունք ունի իրացնելու գրավի առարկան: Վերոնշյալ համաձայնության բացակայության դեպքում գրավ դրված գույքի հաշվին գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարվում են դատարանի վճռով:

Այսպիսով, ֆինանսական կազմակերպությունը պետք է պարտապանին գրավոր ծանուցի գրավադրված գույքի իրացման վերաբերյալ, որից երկու ամիս հետո միայն կարող է իրացնել գույքը:

***Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Տեղեկացնում ենք, որ եթե կողմերի միջեւ կնքված պայմանագրով սահմանված է տույժի վճարման չափ եւ կարգ, ապա ֆինանսական կազմակերպությունն իրավասու է կիրառել դրանք մինչեւ պարտավորությունների ամբողջական մարումը:

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչ կարգով է կատարվում Հայրենական մեծ պատերազմի վետերանների ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց հաշվառումը:**

*Գնել Սահակյան (68 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Փոխհատուցում ստանալու համար Հայրենական մեծ պատերազմի վետերանը հաշվառման նպատակով իր փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին (Փարոս) անձամբ կամ լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով ներկայացնում է սահմանված ձեւի դիմում եւ հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Հայրենական մեծ պատերազմի վետերանի պահանջով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը հաշվառումը կարող է իրականացնել վետերանի բնակության վայրում՝ կազմակերպելով տնային այցելություն (ներառում է այցելություն բուժման վայր):

***ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Հայրենական մեծ պատերազմի վետերանների ավանդների փոխհատուցումը վճարվում է Հայփոստի բաժանմունքի սպասարկող անձի կողմից տուն առաքելու միջոցով:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Բելգիայի ներկայացուցիչների պալատում Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված ցուցահանդեսը բացվեց:

Այն ներկայացուցիչների պալատում ներկայացված կմնա եւս մի քանի օր, որից հետո կտեղափոխվի Եվրոպական խորհրդարան:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | + 3 + 7<br>+14 + 18 |
| Կոտայքի լեռներ | +3 + 6<br>+13 + 15 |
| Կոտայքի նախալեռներ | +9 + 11<br>+17 + 19 |
| Գեղարքունիք | +3 + 8<br>+11 + 15 |
| Լոռի | + 3 + 7<br>+12 + 16 |
| Տավուշ | + 7 + 13<br>+15 + 19 |
| Արագածոտնի լեռներ | + 1 + 5<br>+12 + 15 |
| Արագածոտնի նախալեռներ | + 8 + 11<br>+17 + 20 |

| | |
|---|---|
| Արարատ | + 9 + 11<br>+19 + 22 |
| Արմավիր | + 7 + 10<br>+19 + 22 |
| Վայոց ձորի լեռներ | + 2 + 5<br>+12 + 15 |
| Վայոց ձորի նախալեռներ | + 9 + 11<br>+19 + 21 |
| Սյունիքի հովիտներ | + 7 + 12<br>+18 + 23 |
| Սյունիքի նախալեռներ | + 1 + 5<br>+15 + 18 |
| ԼՂՀ | + 2 + 6<br>+15 + 18 |
| Երեւան | +15 + 18<br>+ 22 + 24 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.10.2024**
Տպաքանակ՝ 3968
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*